Արձանագրության 3
« ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/61» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 31.01.2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բալբաբյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մուկուչյան, Է. Ղազարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Բալբաբյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում է իրականությանը համապատասխանող:

1.2 «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/61» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներից միայն «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից է էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել հրավերի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, իսկ 'Պրայդ Գրուպ' ՍՊԸ-ի կողմից դրանք չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

2. « ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/22» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված և մերժված մասնակիցների մասին

(Ա. Բալբաբյան)

2.1 Հիմք ընդունելով<<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետը(սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած

մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին) և սույն արձանագրության 1.2 կետը մերժել 'Պրայդ Գրուպ' ՍՊԸ –ի կողմից ներկայացված հայտը:

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/22» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի

- 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արիկո-Գոռ» ՍՊԸ-ն

-9, 27 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սմարթլայն» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

(Ա. Բալբաբյան)

5.2. 31.01.2019թ ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվեն առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Բալբաբյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հրավերով նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Բալբաբյան
Անդամներ՝ ---------- Ն. Մուկուչյան
---------- Է. Ղազարյան
Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան